# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿԱՔԱՎԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կաքավաձոր համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Կաքավաձոր, /098/540120, kaqavadzor.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 1

## 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետու համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է.**

Հաստատել Կաքավաձոր համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 15-ի թիվ 1 նիստի օրակարգը.

1. Համայնքի ղեկավարի հաղորդումը 2019 թվականի չորրորդ եռամսյակում տեղական բյուջեի կատարման ընթացքի մասին:
2. Հաստատել Կաքավաձոր համայնքում 2020թ. տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը:
3. Հաստատել Կաքավաձոր համայնքի 2020թ. տարեկան բյուջեն:
4. Սահմանել Կաքավաձորի համայնքի ղեկավարի 2020 թվականի պաշտոնային դրույքաչափը:
5. Հաստատել Կաքավաձորի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:
6. Հաստատել սոցիալական պաշտպանության բնագավառում առանձնացված կատեգորիաների և դրանց համապատասխան դրամական միջոցների չափերի սահմանումը:
7. Կաքավաձոր համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 02-060-0041-0063 ծածկագրի 0.0018 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողատարածքի աճուրդ-վաճառք կազմակերպելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱԿ

ՄԻՆԱՍՅԱՆ ԱՎԵՏԻՍ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՅԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿԱՔԱՎԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կաքավաձոր համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Կաքավաձոր, /098/540120, kaqavadzor.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 2

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի ին ենթակետով, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ի կետի պահանջներով, համայնքի ավագանին*

***ՈՐՈՇՈՒՄ Է.***

*Ընդունել ի գիտություն Կաքավաձոր համայնքի ղեկավարի հաղորդումը 2019 թվականի չորրորդ եռամսյակում տեղական բյուջեի կատարման ընթացքի մասին համաձայն հավելվածի:*

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱԿ

ՄԻՆԱՍՅԱՆ ԱՎԵՏԻՍ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀԱՅԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

*Հավելված*
*Կաքավաձոր գյուղական*
*համայնքի ավագանու*
*15 հունվարի 2020թ.*
*Թիվ 2 որոշման*

ՀՀ Արագածոտն մարզի Կաքավաձոր գյուղական համայնքի 2019թ. 4-րդ եռամսյակի բյուջեի մուտքերը

հազ. դրամ

| Հ/հ | Մուտքերի տեսակները | Պլանավորված մուտքեր | Փաստացի մուտքեր |
|---|---|---|---|
| 1 | Հողի հարկ | 1475 | 1429.26 |
| 2 | Գույքահարկ | 1660 | 2066.9 |
| 3 | Տեղական տուրք | 110.0 | 115 |
| 4 | Դոտացիա | 23822.4 | 23822.4 |
| 5 | Հողի վարձավճար | 200 | 250 |
| 6 | Տեղական վճարներ | 637.15 | 646.33 |
| 7 | Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ | 550.0 | 550.0 |
| 8 | Կապիտալ ոչ պաշտոնական րամաշնորհներ | 0 | 125 |
| 9 | Այլ եկամուտներ | 100 | 100 |

Ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման

հազ. դրամ

| Հ/հ | Ծախսերի տեսակները | Պլանավորված ծախսեր | Փաստացի ծախսեր |
|---|---|---|---|
| 1 | Աշխատավարձ | 17726.37 | 17713.58 |
| 2 | Ապրանքների և ծառայությունների ձեռք բերում | 3213.48 | 3003.86 |
| 3 | Դրամաշնորհներ | 6109.53 | 6109.53 |
| 4 | Սոցիալական նպաստներ | 115 | 115.00 |
| 5 | Այլ ծախսեր այդ թվում պահուստային միջոցներ | 1390.17 | 1390.17 |
| 6 | Կապիտալ ծախսեր | 7927.65 | 3682.27 |
| 7 | Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր | -300.0 | -837.6 |

1/17/2020

X

Համայնքի ղեկավար Հայկ Բաղդասարյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
# ԿԱՔԱՎԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կաքավաձոր համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Կաքավաձոր, /098/540120, kaqavadzor.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 3

### ԿԱՔԱՎԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի և 38-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ կետի, 11-րդ հոդվածի 1-ին կետի, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածների, <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ, 14-րդ հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝*

*ՈՐՈՇՈՒՄ Է՝*

*1. Հաստատել համայնքի տարածքում 2020թ. տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի:*

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱԿ
ՄԻՆԱՍՅԱՆ ԱՎԵՏԻՍ
ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ՄՈՒՐԱԴՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՅԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

Հավելված1
ՀՀ Արագածոտն մարզի Կաքավաձոր
գյուղական համայնքի ավագանու
«15» հունվարի 2020 թվականի N3 որոշման

# ԿԱՔԱՎԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020Թ.ՍԱՀՄԱՆՎԱԾ

## ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ | ԴՐՈՒՅՔԱՉԱՓ /դրամ/ |
|---|---|
| 1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար. | |
| *ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝* | |
| մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ | 7500 |
| *բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝* | |
| - 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ | 15000 |
| - 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ | 25000 |
| - 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ, | 25000 |
| - 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամ. | 50000 |
| *գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝* | |
| - մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար դրամ, | 3000 |
| - 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամ. | 5000 |
| 2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝ | |
| ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ, | 3000 |
| բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով, | |
| գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ | |

| | |
|---|---|
| շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը. | |
| 3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ հինգ հազար դրամ. | 5000 |
| 4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ. | 60000 |
| 6) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ. | 60000 |
| 8) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ. | 15000 |
| 9) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ | |
| *ա. **ոգելից և ալկոհոլային խմիչքի** վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝* | |
| - մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև տասը հազար մեկ դրամ, | 1250 |
| - 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար մեկ դրամից մինչև տասներեք հազար մեկ դրամ, | 3125 |
| - 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամից մինչև քսան հազար մեկ դրամ, | *4500* |
| - 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամից մինչև քսանհինգ հազար մեկ դրամ, | *6600* |
| - 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար մեկ դրամից մինչև քառասունհինգ հազար մեկ դրամ, | *9000* |
| - 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար մեկ դրամից մինչև հարյուր մեկ հազար դրամ. | *30000* |
| *բ. **ծխախոտի** արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝* | |
| - մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև տասը հազար մեկ դրամ, | 1250 |
| - 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար մեկ դրամից մինչև տասներեք հազար մեկ դրամ, | 3125 |
| - 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամից մինչև քսան հազար մեկ դրամ | 4500 |
| - 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամից մինչև քսանհինգ հազար մեկ դրամ | 6600 |
| - 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ | 9000 |

| | |
|---|---|
| հազար մեկ դրամից մինչև քառասունհինգ հազար մեկ դրամ. | |
| - 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար մեկ դրամից մինչև հարյուր հազար մեկ դրամ. | 30000 |
| 12) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝ | |
| *ա. հիմնական շինությունների ներսում՝* | |
| - մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև հինգ հազար մեկ դրամ, | 1500 |
| - 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար մեկ դրամից մինչև տասը հազար մեկ դրամ, | 3000 |
| - 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասը հազար մեկ դրամից մինչև տասնհինգ հազար մեկ դրամ, | 4500 |
| - 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար մեկ դրամից մինչև քսան հազար մեկ դրամ, | 6000 |
| - 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար մեկ դրամից մինչև երեսուն հազար մեկ դրամ, | 9000 |
| - 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսուն հազար մեկ դրամից մինչև հիսուն հազար մեկ դրամ. | 15000 |
| *բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝* | |
| - մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև հազար մեկ դրամ, | 1000 |
| - 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար մեկ դրամից մինչև երկու հազար մեկ դրամ, | 2000 |
| - 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար մեկ դրամից մինչև չորս հազար մեկ դրամ | 4000 |
| - 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար մեկ դրամից մինչև ութ հազար մեկ դրամ, | 6000 |
| - 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար մեկ դրամից մինչև տասնհինգ հազար մեկ դրամ | 10000 |
| - 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար մեկ դրամից մինչև քսանհինգ հազար մեկ դրամ | 25000 |
| 14) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝ | |
| ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ, | 2000 |
| բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ, | 3500 |
| գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ, | 0 |
| դ. այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ, | 1500 |
| ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով, | |
| զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 % ի չափով. | |
| 15) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ. | 30000 |

| ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ | ԴՐԱՄ |
|---|---|
| 1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. | 25000 |
| 2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. | 25000 |
| 3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. | 5000 |
| 4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. | 5000 |
| 5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. | 2000 |
| 6) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը համայնքի ավագանին սահմանում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում. | Հավելված 1/1 |
| 11) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ մինչև հազար դրամ փոխհատուցման վճար: | 1000 |
| 12) Անշարժ գույքի օբյեկտին (հողամաս, տուն) նոր հասցեի տրամադրման, անշարժ գույքի օբյեկտի վերահասցեավորման վճար | 1000 |

*Հավելված 1/1*
*Հաստատված է համայնքի ավագանու*
*«15» հունվարի 2020 թվականի N3 որոշմամբ*

**ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԿԱՔԱՎԱձՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ԱՄՍԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

| **Աղբահանության վճարի դրույքաչափը** | **ՀՀ դրամ** |
|---|---|
| 1. Բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է՝<br>1) ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական հիսունից մինչև չորս հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ, կամ | 100 |
| 2. Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով. | |
| 1) առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հիսունից մինչև հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ. | 50 |
| 2) հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների), հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ քսանից մինչև հիսուն Հայաստանի Հանրապետության դրամ. | 30 |
| 3) վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ տասնհինգից մինչև քսան Հայաստանի Հանրապետության դրամ. | 20 |
| 4) գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ երեքից մինչև տասնհինգ Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ զորանոցների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ ութ Հայաստանի Հանրապետության դրամ. | 3 |
| 5) արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հինգից մինչև տասնհինգ Հայաստանի Հանրապետության դրամ. | 5 |
| 3. Ոչ կենցաղային աղբի համար, ինչպես նաև ոչ բնակելի տարածքների վերաբերյալ սույն հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճարը սահմանվում է՝ | |
| 1) ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ երեք հազար Հայաստանի Հանրապետության դրամ, կամ | |
| 2) ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ տասը հազար Հայաստանի Հանրապետության դրամ | |

**Կաքավաձոր համայնքի ղեկավար՝** **Հ. Բաղդասարյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
# ԿԱՔԱՎԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կաքավաձոր համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Կաքավաձոր, /098/540120, kaqavadzor.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 4

ԿԱՔԱՎԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020թ. ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետով ու «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով, Կաքավաձոր համայնքի ավագանին*

***ՈՐՈՇՈՒՄ Է.***

1. *Հաստատել Կաքավաձոր համայնքի 2020թ. բյուջեն՝ համաձայն կից հավելված 1-ի:*

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱԿ

ՄԻՆԱՍՅԱՆ ԱՎԵՏԻՍ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՀԱՅԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿԱՔԱՎԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կաքավաձոր համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Կաքավաձոր, /098/540120, kaqavadzor.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 5

## ԿԱՔԱՎԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ի կետի 11-րդ ենթակետով, Կաքավաձոր համայնքի ավագանին*

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

*1. Կաքավաձորի համայնքի ղեկավարի 2020 թվականի պաշտոնային դրույքաչափը սահմանել՝ 260.000 /երկու հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամ:*

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱԿ

ՄԻՆԱՍՅԱՆ ԱՎԵՏԻՍ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՀԱՅԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿԱՔԱՎԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կաքավաձոր համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Կաքավաձոր, /098/540120, kaqavadzor.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 6

## ԿԱՔԱՎԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 28-րդ ենթակետով, «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին կետով, Կաքավաձոր համայնքի ավագանին*

***ՈՐՈՇՈՒՄ Է***

*1. Հաստատել Կաքավաձորի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն կից հավելվածի:*

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱԿ

ՄԻՆԱՍՅԱՆ ԱՎԵՏԻՍ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՀԱՅԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

Հավելված
ՀՀ Արագածոտն մարզի Կաքավաձոր
գյուղական  համայնքի ավագանու
15   **հունվարի 2020 թվականի N6  որոշման**

# ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԿԱՔԱՎԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ  ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ  ԹՎԱՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 14
Աշխատակազմի պաշտոնային դրույքաչափերը՝ 10.5

| Հաստիքի անվանումը | Պաշտոնային դրույքաչափ | Հաստիքային միավորը | Ընդամենը ամսական աշխատավարձի չափ | Նպատակային Սոց վճարի չափը | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 260 000 | 1 | 260 000 | | 260 000 |
| Համայնքի ղեկավարի խորհրդական | 210 000 | 0,5 | 105 000 | | 105 000 |
| Համայնքային ծառայության պաշտոններ | | | | | |
| Աշխատակազմի քարտուղար 1.2-1 | 200 000 | 1 | 200 000 | | 200 000 |
| Առաջատար մասնագետ  3.1-1 | 155 000 | 1 | 155 000 | | 155 000 |
| Առաջատար մասնագետ  3.1-2 | 155 000 | 1 | 155 000 | 3875 | 155 000 |
| Առաջատար մասնագետ  3.1-3 | 155 000 | 1 | 155 000 | | 155 000 |
| Մշակույթի տուն | | | | | |
| Մշակույթի տան տնօրեն | 113 334 | 0.75 | 85 000 | 2125 | 85000 |
| Գեղմասվար | 92 000 | 0.5 | 46 000 | | 46 000 |
| Հավաքարար | 92 000 | 0.5 | 46 000 | | 46 000 |
| Գրադարան | | | | | |
| Գրադարանավար | 91 000 | 0.75 | 68250 | | 68250 |
| Սպասարկող անձնակազմ | | | | | |
| Հավաքարար | 92 000 | 0.5 | 46 000 | | 46 000 |
| Պահակ | 95 000 | 0.5 | 47 500 | 1188 | 47 500 |
| Ջրերի հսկիչ | 135 000 | 1 | 135 000 | | 135 000 |
| Անասնաբույժ | 130 000 | 0,5 | 65 000 | | 65 000 |
| **Ընդամենը** | **1 975 334** | **10.5** | **1 568 750** | **7188** | **1 568 750** |
| Քաղաքացիաիրավական պայմանագրով  աշխատողներ | | | | | |
| Աղբահանության ծառայություն մատուցող | 1 ուղերթը 40000 | 2-3 ուղերթ | 80000-120000 | | 80000-120000 |
| Գյուղատնտեսական ծառայություն մատուցող | 80000 | սեզոնային | 80000 | | 80000 |

**Կաքավաձոր համայնքի ղեկավար՝**     **Հ. Բաղդասարյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿԱՔԱՎԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կաքավաձոր համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Կաքավաձոր, /098/540120, kaqavadzor.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 7

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի պահանջներով, համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Սահմանել համայնքի կամավոր խնդիրները սոցիալական պաշտպանության բնագավառում ըստ առանձնացված կատեգորիաների և հաստատել յուրաքանչյուր կատեգորիաներին տրամադրվող սոցիալական օգնության դրամական չափը /հավելված 1/:

*Հավելված 1*
***Կաքավաձոր գյուղական***
***համայնքի ավագանու***
«15» հունվարի 2020 թվականի N7 որոշման

| N/N | Առանձնացված կատեգորիաներ | Դրամական չափը (չափը) | Ծանոթություն |
|---|---|---|---|
| 1 | Զոհված ազատամարտիկների ընտանիքներին | 30000 | |
| 2 | Երկկողմանի ծնողազուրկ երեխաների ընտանիքներին | - | |
| 3 | Միակողմանի ծնողազուրկ երեխաների ընտանիքներին | 30000 | |
| 4 | Ամուսնալուծված ընտանիքներին | 25000 | |
| 5 | Հաշմանդամություն ունեցող ընտանիքներին | 25000 | |
| 6 | Թանկարժեք վիրահատության | 100 000 | |
| 7 | Վիրահատության | 50000 | |
| 8 | Ժամկետային ծառայության մեջ գտնվող զինվորների ընտանիքներին | 20000 | |
| 9 | Հիվանդության կամ բուժման կարիք ունեցող ընտանիքներին | 30000 | |
| 10 | Սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքներին | 20000 | |
| 11 | Բազմազավակ ընտանիքներին | 25000 | |
| 12 | Արտակարգ իրավիճակների հետ կապված հարցերում տուժած ընտանիքներին՝ կախված վնասի չափից | Մինչև 100 000 | |
| 13 | Խրախուսանք գերազանց սովորող ուսանողներին | 30000 | |
| 14 | Երկու և ավելի ուսանող ունեցող անապահով ընտանիքներին ուսման վարձի մասնակի վճարում | Մինչև 100 000 | |
| 15 | Այլ կատեգորիաների | 25000 | |

Համայնքի ղեկավար՝ Հայկ Բաղդասարյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿԱՔԱՎԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կաքավաձոր համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Կաքավաձոր, /098/540120, kaqavadzor.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 8

## ԿԱՔԱՎԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 02-060-0041-0063 ԾԱԾԿԱԳՐԻ 0.0018 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ <<Հողային օրենսգրքի>> 67-70-րդ հոդվածների պահանջներով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286-Ն որոշման և <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21-րդ ենթակետի դրույթներով, համայնքի ավագանին

### *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

Համայնքային սեփականություն համարվող բնակավայրերի 02-060-0041-0063 ծածկագրի 0.0018հա հասարակական կառուցապատման հողատեսքը աճուրդ-վաճառքով օտարել և սահմանել մեկնարկային գին՝ կադաստրային արժեքի 100%-ի չափով:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱԿ

ՄԻՆԱՍՅԱՆ ԱՎԵՏԻՍ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՀԱՅԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**